«Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 22-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն տրաստային ցանկերին վերաբերող տեխնիկական մասնագրերը եւ ձեւաչափերը սահմանող՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 2015/1505 ԿԻՐԱՐԿՈՂ ՈՐՈՇՈՒՄ (ԵՄ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով թիվ 1999/93/ԵՀ հրահանգը ([1]) եւ մասնավորապես՝ դրա 22-րդ հոդվածի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչող՝ «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգը (ԵՄ),

քանի որ՝

1) տրաստային ցանկերը կարեւոր են շուկայի օպերատորների միջեւ վստահության ձեւավորման համար, քանի որ դրանք ցույց են տալիս ծառայություն մատուցողի կարգավիճակը վերահսկողության պահին.

2) էլեկտրոնային ստորագրությունների միջսահմանային կիրառությունը դյուրացվել է Հանձնաժողովի թիվ 2009/767/ԵՀ ([2]) որոշմամբ, որով

[1] ՊՏ L 257, 28.08.2014թ., էջ 73:

[2] Հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 2009/767/ԵՀ որոշում, որը սահմանում է «Մեկ պատուհան» էլեկտրոնային հարթակի միջոցով էլեկտրոնային միջոցներով ընթացակարգերի կիրառությունը դյուրացնող միջոցները՝ համաձայն «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2006/123/ԵՀ հրահանգի (ՊՏ L 274, 20.10.2009թ., էջ 36):

սահմանվել է անդամ պետությունների՝ հանրությանը որակավորված հավաստագրեր տրամադրող հավաստագրման ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տրաստային ցանկեր կազմելու, վարելու եւ հրապարակելու պարտավորությունը՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1999/93/ԵՀ հրահանգին ([3]) համապատասխան, որոնք վերահսկվում եւ հավատարմագրվում են անդամ պետությունների կողմից.

3) թիվ 910/2014/ԵՄ կանոնակարգի (ԵՀ) 22-րդ հոդվածով սահմանվում է անդամ պետությունների՝ տրաստային ցանկեր կազմելու, վարելու եւ հրապարակելու պարտավորությունը, որը պետք է իրականացվի անվտանգ ձեւով, ունենա ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւով էլեկտրոնային ստորագրություն կամ կնիք եւ պետք է Հանձնաժողովին ծանուցի ազգային տրաստային ցանկեր կազմելու համար պատասխանատու մարմինների մասին.

4) տրաստային ծառայություն մատուցողը եւ նրա կողմից մատուցվող տրաստային ծառայությունները համարվում են որակավորված, երբ տրաստային ցանկում ծառայություն մատուցողին տրված է որակավորված կարգավիճակ: Ծառայություն մատուցողների՝ թիվ 910/2014 (ԵՄ) կանոնակարգից բխող այլ, մասնավորապես՝ 27-րդ եւ 37-րդ հոդվածներով սահմանված պարտավորությունները հեռակա կարգով եւ էլեկտրոնային միջոցներով հեշտությամբ կատարելու հնարավորությունն ապահովելու, ինչպես նաեւ այլ այնպիսի հավաստագրման ծառայություն մատուցողների օրինական ակնկալիքները բավարարելու նպատակով, որոնք չեն տրամադրում որակավորված հավաստագրեր, այլ մատուցում են թիվ 1999/93/ԵՀ հրահանգով նախատեսված էլեկտրոնային ստորագրություններին վերաբերող ծառայություններ, եւ որոնք

[3] «Էլեկտրոնային ստորագրությունների համայնքային շրջանակի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1999/93/ԵՀ հրահանգ (ՊՏ L 13, 19.01.2000թ., էջ 12):

ցուցակագրվել են մինչեւ 2016 թվականի հունիսի 30-ը, անդամ պետությունները պետք է կարողանան տրաստային ցանկերում կամավոր հիմունքով ազգային մակարդակում ավելացնել որակավորված տրաստային ծառայություններից բացի այլ տրաստային ծառայություններ՝ պայմանով, որ հստակ նշվի, որ դրանք որակավորված չեն թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն:

5) թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 25-րդ ներածական դրույթին համապատասխան՝ անդամ պետությունները կարող են ավելացնել թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 3-րդ հոդվածի 16-րդ կետով սահմանված տրաստային ծառայություններից տարբեր՝ ազգային մակարդակում սահմանված այլ տեսակի տրաստային ծառայություններ՝ պայմանով, որ հստակ նշվի, որ դրանք որակավորված չեն թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն.

6) սույն որոշմամբ սահմանված միջոցները համապատասխանում են թիվ 910/2014 կանոնակարգի 48-րդ հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Անդամ պետությունները կազմում, հրապարակում եւ վարում են իրենց կողմից վերահսկվող որակավորված տրաստային ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաեւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տրաստային ցանկեր: Այդ ցանկերը պետք է համապատասխանեն Հավելված I-ով սահմանված տեխնիկական մասնագրերին:

Հոդված 2

Անդամ պետությունները կարող են տրաստային ցանկերում ներառել չորակավորված տրաստային ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ նրանց կողմից մատուցվող չորակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հետ միասին: Ցանկում պետք է հստակ նշվի, թե որ տրաստային ծառայություն մատուցողները եւ նրանց կողմից մատուցվող որ տրաստային ծառայությունները որակավորված չեն:

Հոդված 3

1) Թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 22-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ անդամ պետություններն էլեկտրոնային եղանակով ստորագրում կամ կնքում են իրենց տրաստային ցանկի ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւը՝ Հավելված I-ով սահմանված տեխնիկական մասնագրերին համապատասխան.

2) եթե անդամ պետությունը էլեկտրոնային եղանակով հրապարակում է տրաստային ցանկի՝ մարդու համար ընթեռնելի ձեւ, ապա այն ապահովում է, որ տրաստային ցանկի այս ձեւը պարունակի նույն տվյալները, ինչ ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւը, եւ այն էլեկտրոնային եղանակով ստորագրում կամ կնքում է դա՝ Հավելված I-ով սահմանված տեխնիկական մասնագրերին համապատասխան:

Հոդված 4

1) Անդամ պետությունները Հանձնաժողովին հայտնում են թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 22-րդ հոդվածի 3-րդ կետում նշված տեղեկությունները՝ օգտագործելով Հավելված II-ով նախատեսված օրինակելի ձեւը.

2) 1-ին կետում նշված տեղեկությունները ներառում են համակարգի օպերատորի՝ առնվազն երեք ամիս վավերականության փոփոխված ժամկետներով երկու կամ

ավելի բաց բանալիով հավաստագրերը, որոնք համապատասխանում են այն փակ բանալիներին, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկի ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւը, ինչպես նաեւ հրապարակվելու դեպքում՝ մարդու համար ընթեռնելի ձեւը էլեկտրոնային եղանակով ստորագրելու կամ կնքելու համար.

3) թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 22-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, անվտանգ ուղով մուտքագրելով ստուգված վեբ սպասարկիչ, հանրամատչելի է դարձնում 1-ին եւ 2-րդ կետերում նշված տեղեկությունները, ինչպես որ հայտնել են անդամ պետությունները՝ ավտոմատացված մշակման համար նախատեսված ստորագրված կամ կնքված ձեւով.

4) Հանձնաժողովը, անվտանգ ուղով մուտքագրելով ստուգված վեբ սպասարկիչ, կարող է հանրամատչելի դարձնել 1-ին եւ 2-րդ կետերում նշված տեղեկությունները, ինչպես որ հայտնել են անդամ պետությունները՝ մարդու համար ընթեռնելի ստորագրված կամ կնքված ձեւով:

Հոդված 5

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

Սույն որոշումն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի սեպտեմբերի 8-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ՅՈՒՆԿԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՏՐԱՍՏԱՅԻՆ ՑԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ ՏԵԽՆԻԿԱՆԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Տրաստային ցանկերը պետք է ներառեն ինչպես ընթացիկ, այնպես էլ ամբողջ նախընթաց տեղեկությունները թվարկված տրաստային ծառայությունների կարգավիճակի վերաբերյալ՝ սկսած տրաստային ցանկերում տրաստային ծառայություն մատուցողի ներգրավման պահից:

«Հաստատված», «հավատարմագրված» եւ (կամ) «վերահսկվող» եզրույթներն այս մասնագրերում վերաբերում են նաեւ հաստատման ազգային համակարգերին, սակայն անդամ պետությունները պետք է իրենց տրաստային ցանկերում տրամադրեն նաեւ լրացուցիչ տեղեկություններ ցանկացած այդպիսի ազգային համակարգի բնույթի մասին, այդ թվում՝ պարզաբանում՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների նկատմամբ կիրառվող վերահսկման համակարգերի հնարավոր տարբերությունների վերաբերյալ:

Տրաստային ցանկում ներկայացված տեղեկությունները գլխավորապես նպատակաուղղված են որակավորված տրաստային ծառայության հետքորոշիչների, այսինքն՝ որակավորված տրաստային ծառայության, օրինակ, այն է՝ որակավորված հավաստագրով, ժամադրոշմներով, որակավորված էլեկտրոնային առաքման ապացույցներով եւ այլնով հիմնավորված որակավորված էլեկտրոնային ստորագրությունների/կնիքների, ժամանակակից

էլեկտրոնային ստորագրությունների/կնիքների օգտագործման արդյունքում ստեղծված կամ թողարկված ֆիզիկական կամ բինարային (տրամաբանական) օբյեկտների հաստատմանն աջակցելուն:

ԳԼՈՒԽ II

ՏՐԱՍՏԱՅԻՆ ՑԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

Այս մասնագրերը հիմնված են Հեռահաղորդակցման ստանդարտների հարցերով եվրոպական ինստիտուտի (ՀՍԵԻ) 119 612 տեխնիկական մասնագրի (ՏՄ) 2.1.1 տարբերակում սահմանված մասնագրերի եւ պահանջների վրա (այսուհետ՝ ՀՍԵԻ ՏՄ 119 612):

Այս մասնագրերում կոնկրետ պահանջներ սահմանված չլինելու դեպքում կիրառվում են ՀՍԵԻ ՏՄ 119 612-ի 5-րդ եւ 6-րդ կետերն ամբողջությամբ: Այս մասնագրերում կոնկրետ պահանջներ սահմանված լինելու դեպքում դրանք գերակայում են ՀՍԵԻ ՏՄ 119 612-ի համապատասխան պահանջների նկատմամբ: Այս մասնագրերի եւ ՀՍԵԻ ՏՄ 119 612-ի մասնագրերի միջեւ անհամապատասխանությունների դեպքում գերակայում են այս մասնագրերը:

Համակարգի անվանումը (կետ 5.3.6)

Այս դաշտը պետք է առկա լինի եւ համապատասխանի ՏՄ 119 612-ի 5.3.6 կետի մասնագրերին, որտեղ համակարգի համար օգտագործվում է հետեւյալ անվանումը.

«EN_անվանում_արժեք» = «Տրաստային ցանկ, որում պարունակվում են տրամադրող անդամ պետության կողմից վերահսկվող որակավորված տրաստային ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաեւ տեղեկություններ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ՝ «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին, ինչպես նաեւ թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգում (ԵՄ) սահմանված համապատասխան դրույթների համաձայն:

Համակարգի վերաբերյալ տեղեկությունների URI (կետ 5.3.7)

Այս դաշտը պետք է առկա լինի եւ համապատասխանի ՏՄ 119 612-ի 5.3.7 կետի մասնագրերին, որտեղ «համակարգի վերաբերյալ համապատասխան տեղեկություններ» բաժինը ներառում է առնվազն՝

ա) բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր ներածական տեղեկություններ տրաստային ցանկի ընդգրկման շրջանակի եւ համատեքստի, վերահսկողության հիմնական համակարգի եւ կիրառելիության դեպքում՝ ազգային հաստատման (օրինակ՝ հավատարմագրման) համակարգի (համակարգերի) վերաբերյալ: Ընդհանուր տեքստը, որը պետք է օգտագործել, ստորեւ ներկայացվող տեքստն է, որում պայմանանշանների տողը (համապատասխան անդամ պետության անվանումը) փոխարինվում է համապատասխան անդամ պետության անվանումով.

«Այս ցանկն այն տրաստային ցանկն է, որում պարունակվում են տեղեկություններ ____-ի (համապատասխան անդամ պետության անունը) կողմից վերահսկվող որակավորված տրաստային ծառայություն մատուցողների

վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություններ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ՝ «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին, ինչպես նաեւ թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգում (ԵՄ) սահմանված համապատասխան դրույթների համաձայն:

Էլեկտրոնային ստորագրությունների միջսահմանային կիրառությունը դյուրացվել է Հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 2009/767/ԵՀ որոշմամբ, որով սահմանվել է անդամ պետությունների՝ հանրությանը որակավորված հավաստագրեր տրամադրող հավաստագրման ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տրաստային ցանկեր կազմելու, վարելու եւ հրապարակելու պարտավորությունը՝ «Էլեկտրոնային ստորագրությունների համայնքային շրջանակի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1999/93/ԵՀ հրահանգին համապատասխան, եւ որոնք վերահսկվում/հավատարմագրվում են անդամ պետությունների կողմից: Այս տրաստային ցանկը թիվ 2009/767/EC որոշմամբ կազմված տրաստային ցանկի շարունակությունն է»:

Տրաստային ցանկերը կարեւոր տարրեր են էլեկտրոնային շուկայի օպերատորների միջեւ վստահություն ստեղծելու համար՝ թույլ տալով օգտվողներին որոշել տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց ծառայությունների որակավորված կարգավիճակը եւ կարգավիճակի պատմությունը:

Անդամ պետությունների տրաստային ցանկերը նվազագույնը ներառում են Հանձնաժողովի թիվ 2015/1505 կիրարկող որոշման (ԵՄ) 1-ին եւ 2-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունները:

Անդամ պետությունները կարող են տրաստային ցանկերում ներառել չորակավորված տրաստային ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ նրանց կողմից մատուցվող չորակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հետ միասին: Պետք է հստակ նշվի, որ դրանք որակավորված չեն թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն:

Անդամ պետությունները կարող են տրաստային ցանկերում ներառել թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) 3-րդ հոդվածի 16-րդ կետով սահմանված տրաստային ծառայություններից տարբեր՝ ազգային մակարդակում սահմանված այլ տեսակի տրաստային ծառայություններ: Պետք է հստակ նշվի, որ դրանք որակավորված չեն թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն.

բ) կոնկրետ տեղեկություններ վերահսկողության հիմնական համակարգի եւ կիրառելիության դեպքում՝ հաստատման (օրինակ՝ հավատարմագրման) ազգային համակարգի (համակարգերի) վերաբերյալ, մասնավորապես ([1])՝

1) որակավորված եւ չորակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցվող որակավորված եւ չորակավորված տրաստային ծառայությունների նկատմամբ կիրառելի վերահսկողության ազգային համակարգի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես կարգավորվում է թիվ 910/2014

[1] Տեղեկությունների այդ լրակազմն էական կարեւորություն ունի վստահող կողմերի համար այդ համակարգերի որակը եւ անվտանգության մակարդակը գնահատելիս: Տեղեկությունների այդ լրակազմը տրամադրվում է տրաստային ցանկի մակարդակով՝ այս «Համակարգի վերաբերյալ տեղեկությունների URI» (կետ 5.3.7՝ անդամ պետությունների կողմից տրամադրվող տեղեկություններ), «Համակարգի տեսակը/համայնքը/կանոնները» (կետ 5.3.9՝ բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր տեքստի օգտագործում) եւ «Տրաստային ծառայությունների կարգավիճակի ցանկի մասով քաղաքականություն/իրավական ծանուցում» (կետ 5.3.11՝ բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր տեքստ՝ յուրաքանչյուր անդամ պետության կողմից անդամ պետությանը հատուկ տեքստ/հղումներ ավելացնելու կարողության հետ միասին) բաժինների օգտագործման միջոցով: Չորակավորված տրաստային ծառայությունների եւ ազգային մակարդակով սահմանված (որակավորված) տրաստային ծառայությունների համար այդ համակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող են տրամադրվել ծառայությունների մակարդակով (օրինակ՝ որակի/անվտանգության մի քանի մակարդակների միջեւ տարբերակում դնելու համար), ըստ կիրառելիության եւ անհրաժեշտության, «Համակարգի ծառայությունների սահմանման URI»-ի (կետ 5.5.6) օգտագործման միջոցով:

կանոնակարգով (ԵՄ).

2) ըստ կիրառելիության՝ տեղեկություններ թիվ 1999/93/ԵՀ հրահանգի համաձայն որակավորված հավաստագրեր տրամադրած՝ հավաստագրման ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառելի կամավոր հավատարմագրման ազգային համակարգերի վերաբերյալ:

Այդ կոնկրետ տեղեկությունները վերոնշյալ յուրաքանչյուր հիմնական համակարգի համար ներառում են առնվազն՝

1) ընդհանուր նկարագրություն.

2) տեղեկություններ այն գործընթացի մասին, որին պետք է հետեւել ազգային վերահսկողության համակարգի եւ անհրաժեշտության դեպքում՝ ազգային հաստատման համակարգի համաձայն հաստատման համար.

3) տեղեկություններ այն չափանիշների մասին, որոնց հիման վրա տրաստային ծառայություն մատուցողները վերահսկվում կամ անհրաժեշտության դեպքում՝ հաստատվում են.

4) տեղեկություններ՝ վերահսկողների/աուդիտորների ընտրության համար օգտագործվող չափանիշների եւ կանոնների, ինչպես նաեւ տրաստային ծառայություն մատուցողներին եւ վերջիններիս կողմից մատուցվող տրաստային ծառայությունները նրանց կողմից գնահատելու եղանակը սահմանելու մասին.

5) ըստ կիրառելիության՝ համակարգի գործունեության նկատմամբ կիրառելի այլ կոնտակտային եւ ընդհանուր տեղեկություններ:

Համակարգի տեսակը/համայնքը/կանոնները (կետ 5.3.9)

Այս դաշտը պետք է առկա լինի եւ համապատասխանի ՏՄ 119 612-ի 5.3.9 կետի մասնագրերին:

Այն պետք է ներառի միայն ՄԹ անգլերենով URI-ներ:

Այն պետք է ներառի առնվազն երկու URI-ներ.

1) բոլոր անդամ պետությունների տրաստային ցանկերի համար ընդհանուր URI, որը մատնանշում է բոլոր տրաստային ցանկերի համար կիրառելի նկարագրական տեքստը՝ հետեւյալ ձեւով.

URI. http://uri.etsi.org/TrstSvc/TrustedList/schemerules/EUcommon

Նկարագրական տեքստը.

«Մասնակցությունը համակարգին

Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ստեղծի տրաստային ցանկ, որում պարունակվում են տեղեկություններ վերահսկողության տակ գտնվող որակավորված տրաստային ծառայություն մատուցողների վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություններ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ՝ «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին, ինչպես նաեւ թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգում (ԵՄ) սահմանված համապատասխան դրույթների համաձայն:

Այդ տրաստային ցանկերի ներկայիս իրականացումը պետք է հիշատակվի նաեւ Եվրոպական հանձնաժողովի կողմից կազմված յուրաքանչյուր անդամ պետության տրաստային ցանկին արված հղումների (ցուցիչների) ցանկում:

Թվարկված ծառայությունների գնահատման քաղաքականությունը/կանոնները

Անդամ պետությունները պետք է վերահսկողություն իրականացնեն նշանակող անդամ պետության տարածքում հիմնադրված որակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ՝ թիվ 910/214 կանոնակարգի (ԵՄ) III գլխում սահմանված կարգով՝ ապահովելու այդ որակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների համապատասխանությունը Կանոնակարգում սահմանված պահանջներին:

Անդամ պետությունների տրաստային ցանկերը նվազագույնը ներառում են Հանձնաժողովի թիվ 2015/1505 կիրարկող որոշման (ԵՄ) 1-ին եւ 2-րդ հոդվածներով սահմանված տեղեկությունները:

Տրաստային ցանկերը ներառում են ինչպես ընթացիկ, այնպես էլ նախընթաց տեղեկություններ թվարկված տրաստային ծառայությունների կարգավիճակի վերաբերյալ:

Յուրաքանչյուր անդամ պետության տրաստային ցանկում պետք է տրամադրվեն տեղեկություններ ազգային վերահսկողության համակարգի եւ ըստ կիրառելիության՝ հաստատման (օրինակ՝ հավատարմագրման) ազգային համակարգի (համակարգերի) մասին, որոնց համաձայն թվարկվում են տրաստային ծառայություն մատուցողները եւ նրանց կողմից մատուցվող տրաստային ծառայությունները:

Տրաստային ցանկի մեկնաբանումը

Թիվ 910/214 կանոնակարգին (ԵՄ) համապատասխան հրապարակված տրաստային ցանկի վրա հիմնված հավելվածների, ծառայությունների կամ ապրանքների՝ օգտագործողի ընդհանուր ուղեցույցը հետեւյալն է.

Տրաստային ծառայության «որակավորված» կարգավիճակը նշվում է ծառայության մուտքագրման դաշտում «Ծառայության տեսակի նույնականացման նշան» [Service type identifier] («Sti») արժեքի եւ «Ներկա կարգավիճակի սկզբնական ամսաթիվը եւ ժամը» դաշտում նշված ամսաթվի դրությամբ «Ծառայության ներկա կարգավիճակը» դաշտի արժեքին համապատասխանող կարգավիճակի համակցությամբ: Այդ որակավորված կարգավիճակի վերաբերյալ նախընթաց տեղեկությունները տրամադրվում են համանման ձեւով՝ ըստ կիրառելիության:

Էլեկտրոնային ստորագրությունների, էլեկտրոնային կնիքների եւ (կամ) վեբ կայքի իսկորոշման համար որակավորված հավաստագրեր տրամադրող որակավորված տրաստային ծառայություն մատուցողների առնչությամբ՝

«CA/QC» «Ծառայության տեսակի նույնականացման նշան» («Sti») մուտքագրումը (հնարավոր է հետագայում որակավորվի որպես «RootCA-QC»՝ համապատասխան «Ծառայության տեղեկատվության ընդլայնման» [Service information extension] («Sie»), «Լրացուցիչ ծառայության տեղեկատվության ընդլայնման» [additionalServiceInformation Extension] օգտագործման միջոցով)՝

— ցույց է տալիս, որ «Ծառայության թվային նույնականացման նշան» [Service digital identifier] («Sdi»), CA-ի բաց բանալու եւ CA-ի անունով (երկու CA տվյալներն էլ պետք է համարվեն տրաստային կետի մուտքագրում) ներկայացված CA-ի կողմից կամ դրա համաձայն տրված հիմնական օբյեկտների ցանկացած հավաստագիր որակավորված հավաստագիր (QC) է՝ պայմանով, որ այն ներառում է հետեւյալից առնվազն մեկը.

  — ՀՍԵԻ-ի կողմից սահմանված id-etsi-qcs-QcCompliance (id-etsi-qcs 1) տեղեկանք,

  — ՀՍԵԻ-ի կողմից սահմանված 0.4.0.1456.1.1 (QCP+) հավաստագրի OID քաղաքականություն,

  — ՀՍԵԻ-ի կողմից սահմանված 0.4.0.1456.1.2 (QCP) հավաստագրի OID քաղաքականություն,

եւ պայմանով, որ այն ապահովվում է անդամ պետության վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից՝ այդ մուտքագրման համար ծառայության վավեր կարգավիճակի միջոցով (այսինքն՝ «undersupervision» [վերահսկողության տակ], «supervisionincessation» [վերահսկողությունը դադարեցվել է], «accredited» [հավատարմագրված] կամ «granted» [շնորհված]).

— **եւ ԵԹԵ** առկա են «Sie» «Qualifications Extension» [Որակավորումների ընդլայնում] տեղեկություններ, ապա բացի վերոնշյալ ընդհանուր կանոնից, այն հավաստագրերը, որոնք ճանաչվում են «Sie» «Qualifications Extension» տեղեկությունների օգտագործման միջոցով, կառուցված են որպես հետագայում մի շարք հավաստագրեր նույնականացնող զտիչների հաջորդականություն, պետք է դիտարկվեն համապատասխան հատկորոշիչների համաձայն, որոնք լրացուցիչ տեղեկություններ են տալիս իրենց որակավորված կարգավիճակի, «SSCD աջակցության» եւ (կամ) «որպես սուբյեկտ հանդես եկող իրավաբանական անձի» (օրինակ՝ Հավաստագրերի քաղաքականության ընդլայնման մեջ որոշակի OID պարունակող եւ (կամ) որոշակի «Հիմնական օգտագործում» կաղապար ունեցող եւ (կամ) հավաստագրի մեկ կոնկրետ դաշտում կամ ընդլայնման մեջ երեւալու նպատակով որոշակի արժեքի օգտագործման միջոցով զտված հավաստագրերը եւ այլն) վերաբերյալ: Այդ հատկորոշիչները «Հատկորոշիչների» հետեւյալ խմբի մաս են կազմում, որոնք օգտագործվում են հավաստագրերի համապատասխան բովանդակության մեջ տեղեկությունների բացակայությունը լրացնելու համար, եւ որոնք օգտագործվում են համապատասխանաբար՝

— մատնանշելու որակավորված հավաստագրի բնույթը.

— «QCStatement», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը) որակավորված է (են) թիվ 1999/93/ԵՀ հրահանգի համաձայն.

— «QCForESig», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, էլեկտրոնային ստորագրության մասով որակավորված հավաստագիր (հավաստագրեր) է (են)՝ թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն.

— «QCForESeal», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, էլեկտրոնային կնիքի մասով որակավորված հավաստագիր (հավաստագրեր) է (են)՝ թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն.

— «QCForWSA», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, վեբ կայքի իսկորոշման մասով որակավորված հավաստագիր (հավաստագրեր) է (են)՝ թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) համաձայն.

— մատնանշելու, որ հավաստագիրը չպետք է համարվի որակավորված.

— «NotQualified», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը) չպետք է համարվի (համարվեն) որակավորված եւ (կամ)

— մատնանշելու SSCD աջակցության բնույթը.

— «QCWithSSCD», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, ունի (ունեն) SSCD-ում գտնվող իր (իրենց) փակ բանալին, կամ

— «QCNoSSCD», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, չունի (չունեն) SSCD-ում գտնվող իր (իրենց) փակ բանալին, կամ

— «QCSSCDStatusAsInCert», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, պարունակում է (են) ավտոմատացված մշակման ենթակա համապատասխան տեղեկություններ այն մասին, թե արդյոք դրա (դրանց) փակ բանալին գտնվում է SSCD-ում, թե՝ ոչ.

— մատնանշելու QSCD աջակցության բնույթը.

— «QCWithQSCD», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, ունի (ունեն) QSCD-ում գտնվող իր (իրենց) փակ բանալին, կամ

— «QCNoQSCD», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, չունի (չունեն) QSCD-ում գտնվող իր (իրենց) փակ բանալին, կամ

— «QCQSCDStatusAsInCert», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, պարունակում է (են)

ավտոմատացված մշակման ենթակա համապատասխան տեղեկություններ այն մասին, թե արդյոք դրա (դրանց) փակ բանալին գտնվում է QSCD-ում, թե՝ ոչ.

— «QCQSCDManagedOnBehalf», որը ցույց է տալիս, որ չափանիշների կիրառելի ցանկի համաձայն նույնականացված բոլոր հավաստագրերը, որոնց որակավորված լինելու մասով պնդում կամ հայտարարություն է արվում, ունեն «QSCD»-ում գտնվող իրենց փակ բանալին, որի համար այդ փակ բանալու ստեղծումը եւ կառավարումն իրականացվում է որակավորված տեխնիկական ծառայություն մատուցողի կողմից՝ այն մարմնի անունից, որի ինքնությունը հաստատվում է հավաստագրում, եւ (կամ)

— մատնանշելու տրամադրումն իրավաբանական անձին.

— «QCForLegalPerson», ինչը նշանակում է, որ նույնականացված հավաստագիրը (հավաստագրերը), որի (որոնց) որակավորված հավաստագիր (հավաստագրեր) լինելու մասին պնդում կամ հայտարարություն է ներկայացվում, տրամադրվում է (են) իրավաբանական անձին՝ թիվ 1999/93/ԵՀ հրահանգի (ԵՄ) համաձայն:

Ծանոթագրություն. Տրաստային ցանկում տրամադրվող տեղեկությունները համարվում են ճշգրիտ, ինչը նշանակում է, որ՝

— եթե հիմնական օբյեկտների հավաստագրում ներառված չեն ո՛չ «id-etsi-qcs 1» տեղեկանքը, ո՛չ QCP OID («որակավորված հավաստագրի պրոֆիլ» «օբյեկտի նույնականացման նշան») կամ QCP + OID տեղեկությունները, եւ

— եթե CA/QC տրաստային կետի համապատասխան ծառայության մուտքագրման համար առկա չեն որեւէ «Sie» «Qualifications Extension» [Որակավորումների ընդլայնում] տեղեկություններ՝ հավաստագիրը «QCStatement» հատկորոշչով որակավորելու համար, կամ

— եթե CA/QC տրաստային կետի համապատասխան ծառայության մուտքագրման համար առկա են «Sie» «Qualifications Extension» [Որակավորումների ընդլայնում] տեղեկություններ՝ հավաստագիրը «NotQualified» հատկորոշչով որակավորելու համար,

ապա այդ դեպքում հավաստագիրը չի համարվում որակավորված:

«Ծառայությունների թվային նույնականացման նշանները» պետք է օգտագործվեն որպես տրաստային կետեր էլեկտրոնային ստորագրությունների կամ կնիքների վալիդացման համատեքստում, որի համար ստորագրողի կամ կնիք ստեղծողի հավաստագիրը պետք է վալիդացվի՝ կապված տրաստային ցանկի տեղեկությունների հետ, հետեւաբար որպես տրաստային կետի տեղեկություններ անհրաժեշտ են միայն բաց բանալին եւ դրա հետ կապված սուբյեկտի անվանումը: Երբ ծառայությունը նույնականացնող բաց բանալին ներկայացվում է մեկից ավելի հավաստագրերով, ապա դրանք պետք է համարվեն տրաստային կետերի հավաստագրեր, որոնք փոխանցում են նույնական տվյալներ՝ կապված այն տեղեկությունների հետ, որոնք խիստ անհրաժեշտ են որպես տրաստային կետերի տեղեկություններ:

«Sti» տիպի ցանկացած այլ մուտքագրում մեկնաբանելու ընդհանուր կանոնն այն է, որ նույնականացված ծառայության այդ «Sti» տիպի համար «Ծառայության անվանում» դաշտի արժեքի համաձայն անվանված եւ «Ծառայության թվային ինքնություն» դաշտի արժեքով բացառապես նույնականացված թվարկված ծառայությունը «Ներկա կարգավիճակի սկզբնական ամսաթիվը եւ ժամը» դաշտում նշված ամսաթվի դրությամբ ունի ընթացիկ որակավորված կամ հաստատված կարգավիճակ՝ «Ծառայությունների ներկա կարգավիճակը» դաշտի արժեքի համաձայն:

Թվարկված ծառայության (օրինակ՝ «Ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների ընդլայնում» դաշտի) առնչությամբ ցանկացած լրացուցիչ տեղեկության կոնկրետ մեկնաբանման կանոն, ըստ կիրառելիության, կարելի է

գտնել անդամ պետության կոնկրետ URI-ում՝ որպես այս «Համակարգի տեսակ/համայնք/կանոններ» դաշտի մաս:

Խնդրում ենք անդամ պետությունների տրաստային ցանկերի դաշտերի, նկարագրության եւ նշանակության հետ կապված հետագա մանրամասների համար հղում կատարել կիրառելի ենթաօրենսդրական ակտերին՝ թիվ 910/2014 կանոնակագին (ԵՄ) համապատասխան.

2) յուրաքանչյուր անդամ պետության տրաստային ցանկի համար ընդհանուր URI, որը մատնանշում է այդ անդամ պետության տրաստային ցանկի համար կիրառելի նկարագրական տեքստը՝

http://uri.etsi.org/TrstSvc/TrustedList/schemerules/CC , որտեղ CC = «Համակարգի տարածք» դաշտում օգտագործվող ISO 3166-1 (1) ալֆա-2 երկրի ծածկագրին (կետ 5.3.10),

— որի պայմաններում օգտագործողները կարող են ձեռք բերել անդամ պետության հիշատակված հատուկ քաղաքականությունը/կանոնները, որոնց համաձայն ցանկում ներառված տրաստային ծառայությունները գնահատվում են անդամ պետության վերահսկողության ռեժիմին եւ ըստ կիրառելիության՝ հաստատման համակարգին համապատասխան.

— որտեղ օգտագործողները կարող են ձեռք բերել անդամ պետության հիշատակված կոնկրետ նկարագրությունն այն մասին, թե ինչպես օգտագործել եւ մեկնաբանել տրաստային ցանկի բովանդակությունը՝ կապված թվարկված չորակավորված տրաստային ծառայությունների եւ (կամ) ազգային մակարդակում սահմանված տրաստային ծառայությունների հետ: Սա կարող է օգտագործվել մատնանշելու համար որակավորված հավաստագրեր չտրամադրող հաղորդակցության ծառայություն մատուցողներին (ՀԾՄ) առնչվող հաստատման ազգային համակարգում հնարավոր մոդուլայնությունը եւ այն, թե ինչպես են «Համակարգի ծառայությունների սահմանման URI»-

ն (կետ 5.5.6) եւ «Ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների ընդլայնում» դաշտը (կետ 5.5.9) օգտագործվում այդ նպատակի համար:

Անդամ պետությունները ԿԱՐՈՂ ԵՆ սահմանել եւ օգտագործել լրացուցիչ URI-ներ՝ ընդլայնելով անդամ պետության վերոնշյալ կոնկրետ URI-ն (այսինքն՝ URI-ներ, որոնք սահմանված են այս աստիճանակարգային կոնկրետ URI-ից):

Տրաստային ծառայությունների կարգավիճակի ցանկի մասով քաղաքականություն/իրավական ծանուցում (կետ 5.3.11)

Այս դաշտը պետք է առկա լինի եւ համապատասխանի ՏՄ 119 612-ի 5.3.9 կետի մասնագրերին, որի դեպքում համակարգի իրավական կարգավիճակին վերաբերող քաղաքականությունը/իրավական ծանուցումը կամ իրավական պահանջները, որոնց այդ համակարգը համապատասխանում է՝ համաձայն այն իրավազորության, որի ներքո ստեղծվել է, եւ (կամ) սահմանափակումները եւ պայմանները, որոնց համաձայն տրաստային ցանկը վարում եւ հրապարակում են, պետք է իրենից ներկայացնի բազմալեզու պայմանանիշերով տողերի հաջորդականություն (տե՛ս 5.1.4 կետը), որը ՄԹ անգլերենով (որպես պարտադիր լեզու) եւ կամընտիր ձեւով մեկ կամ մի քանի ազգային լեզուներով ներկայացնում է ցանկացած այդպիսի քաղաքականության կամ ծանուցման փաստացի տեքստը, որը կառուցվում է հետեւյալ ձեւով՝

(1) ISO 3166-1:2006: «Երկրների եւ դրանց վարչական միավորների անունները ներկայացնելու համար նախատեսված ծածկագրեր. Մաս 1. երկրների ծածկագրերը»:

1) Առաջին պարտադիր մաս, որն ընդհանուր է բոլոր անդամ պետությունների տրաստային ցանկերի համար եւ մատնանշում է կիրառելի իրավական դաշտը, եւ որի անգլերեն տարբերակը հետեւյալն է.

Այս տրաստային ցանկի համար կիրառելի իրավական դաշտը «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին, ինչպես նաեւ թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգն (ԵՄ) է:

Անդամ պետության ազգային լեզվով (լեզուներով) տեքստը.

Այս տրաստային ցանկի համար կիրառելի իրավական դաշտը «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին, ինչպես նաեւ թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի թիվ 910/2014 կանոնակարգն (ԵՄ) է:

2) Երկրորդ՝ կամընտրական մաս, որը հատուկ է յուրաքանչյուր տրաստային ցանկին եւ մատնանշում է հղումներ կոնկրետ կիրառելի ազգային իրավական դաշտին

Ծառայության ներկա կարգավիճակը (կետ 5.5.4)

Այս դաշտը պետք է առկա լինի եւ համապատասխանի ՏՄ 119 612-ի 5.5.4 կետի մասնագրերին:

Եվրոպական միության անդամ պետությունների տրաստային ցանկում թվարկվող ծառայությունների «Ծառայությունների ներկա կարգավիճակը» արժեքի տեղափոխումը մինչեւ թիվ 910/2014 կանոնակարգի (ԵՄ) կիրառման ամսաթիվն ընկած օրվա դրությամբ (այսինքն՝ 2016 թվականի հունիսի 30-ը) իրականացվում է Կանոնակարգի կիրառման օրը (այսինքն՝ 2016 թվականի հուլիսի 1-ը), ինչպես որ սահմանված է ՀՍԵԻ ՏՄ 119 612-ի Հավելված Ժ-ում:

ԳԼՈՒԽ III

ՏՐԱՍՏԱՅԻՆ ՑԱՆԿԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն հավաստագրերը, որոնց մասին սույն որոշման 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ծանուցվում է Հանձնաժողովին, պետք է համապատասխանեն ՀՍԵԻ ՏՄ 119 612-ի 5.7.1 կետի պահանջներին եւ պետք է տրվեն այնպես, որ դրանք՝

— ունենան առնվազն երեք ամսվա տարբերություն իրենց վավերականության վերջնական ամսաթվի համեմատ (ոչ դրանից հետո),

— ստեղծվեն բանալիների նոր զույգի հիման վրա: Նախկինում օգտագործված զույգ բանալիները չպետք է վերահավաստագրվեն:

Բաց բանալիների հավաստագրերից մեկի գործողության ժամկետը լրանալու դեպքում, որոնք կարող էին օգտագործվել այն տրաստային ցանկի ստորագրությունը կամ կնիքը ստուգելու համար, որը ծանուցվել է Հանձնաժողովին եւ հրապարակված է Հանձնաժողովի ցուցիչների կենտրոնական ցանկում, անդամ պետությունները պարտավոր են՝

— այն դեպքում, երբ տվյալ պահին հրապարակված տրաստային ցանկը ստորագրվել կամ կնքվել է փակ բանալիով, որի բաց բանալու հավաստագրի գործողության ժամկետը լրացել է, անհապաղ վերաթողարկել նոր տրաստային ցանկ՝ ստորագրված կամ կնքված փակ բանալիով, որի ծանուցված բաց բանալու հավաստագրի գործողության ժամկետը չի լրացել.

— անհրաժեշտության դեպքում ստեղծել նոր զույգ բանալիներ, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկը ստորագրելու կամ կնքելու համար, եւ սկսել դրանց համապատասխան բաց բանալիների հավաստագրերի ստեղծման գործընթացը.

— անմիջապես Հանձնաժողովին փոխանցել այն փակ բանալիներին համապատասխանող բաց բանալիների հավաստագրերի նոր ցանկը, որոնք

կարող են օգտագործվել տրաստային ցանկը ստորագրելու կամ կնքելու համար:

Բաց բանալիների հավաստագրերից մեկին համապատասխանող փակ բանալիներից մեկի վտանգվելու կամ շահագործումից դուրս գալու դեպքում, որոնք կարող էին օգտագործվել այն տրաստային ցանկի ստորագրությունը կամ կնիքը ստուգելու համար, որը ծանուցվել է Հանձնաժողովին եւ հրապարակված է Հանձնաժողովի ցուցիչների կենտրոնական ցանկում, անդամ պետությունները պարտավոր են՝

— անհապաղ վերաթողարկել նոր տրաստային ցանկ՝ ստորագրված կամ կնքված չվտանգված փակ բանալիով այն դեպքում, երբ հրապարակված տրաստային ցանկը ստորագրվել կամ կնքվել է վտանգված կամ շահագործումից դուրս եկած փակ բանալիով.

— անհրաժեշտության դեպքում ստեղծել նոր զույգ բանալիներ, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկը ստորագրելու կամ կնքելու համար, եւ սկսել դրանց համապատասխան բաց բանալիների հավաստագրերի ստեղծման գործընթացը.

— անմիջապես Հանձնաժողովին փոխանցել այն փակ բանալիներին համապատասխանող բաց բանալիների հավաստագրերի նոր ցանկը, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկը ստորագրելու կամ կնքելու համար:

Բաց բանալիների հավաստագրերին համապատասխանող բոլոր փակ բանալիների վտանգվելու կամ շահագործումից դուրս գալու դեպքում, որոնք կարող էին օգտագործվել այն տրաստային ցանկի ստորագրությունը ստուգելու համար, որը ծանուցվել է Հանձնաժողովին եւ հրապարակված է Հանձնաժողովի ցուցիչների կենտրոնական ցանկում, անդամ պետությունները պարտավոր են՝

— ստեղծել նոր զույգ բանալիներ, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկը ստորագրելու կամ կնքելու համար, եւ սկսել դրանց համապատասխան բաց բանալիների հավաստագրերի ստեղծման գործընթացը.

— անհապաղ վերաթողարկել նոր տրաստային ցանկ՝ ստորագրված կամ կնքված այդ նոր փակ բանալիներից մեկով, եւ որի համապատասխան բաց բանալիների հավաստագրի մասին պետք է հայտնել.

— անմիջապես Հանձնաժողովին փոխանցել այն փակ բանալիներին համապատասխանող բաց բանալիների հավաստագրերի նոր ցանկը, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկը ստորագրելու կամ կնքելու համար:

ԳԼՈՒԽ IV

ՏՐԱՍՏԱՅԻՆ ՑԱՆԿԻ՝ ՄԱՐԴՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԹԵՌՆԵԼԻ ՁԵՎԻ ՄԱՍՆԱԳՐԵՐԸ

Տրաստային ցանկի՝ մարդու համար ընթեռնելի ձեւի կազմման եւ հրապարակման դեպքում այն պետք է տրամադրվի դյուրակիր փաստաթղթի ձեւաչափով (PDF) փաստաթղթի ձեւով՝ համաձայն ISO 32000-ի [(1),] որը պետք է ձեւաչափվի համաձայն PDF/A պրոֆիլի (ISO 19005 [(2))]:

Տրաստային ցանկի՝ PDF/A-ի վրա հիմնված մարդու համար ընթեռնելի ձեւի բովանդակությունը պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին.

— մարդու համար ընթեռնելի ձեւի կառուցվածքը պետք է արտացոլի ՏՄ 119 612-ում նկարագրված տրամաբանական մոդելը.

— յուրաքանչյուր առկա դաշտ պետք է ցուցադրվի եւ ապահովի՝

[1] [1] ISO 32000-1:2008. Փաստաթղթերի կառավարում. Դյուրակիր փաստաթղթի ձեւաչափ. Մաս 1. PDF 1.7

[2] ISO 19005-2:2011. Փաստաթղթերի կառավարում. Էլեկտրոնային փաստաթղթի պանակի ձեւաչափ երկարաժամկետ պահպանման համար. Մաս 2. ISO 32000-1 (PDF/A-2)-ի օգտագործում

— դաշտի վերնագիրը (օրինակ՝ «Ծառայության տեսակի նույնականացման նշանը»).

— դաշտի արժեքը (օրինակ՝ «http://uri.etsi.org/TrstSvc/Svctype/CA/QC}»).

— դաշտի արժեքի նշանակությունը (նկարագրությունը)՝ կիրառելիության դեպքում (օրինակ՝ «Հավաստագրերի ստեղծման ծառայություն, որը ստեղծում եւ ստորագրում է որակավորված հավաստագրեր՝ հիմնվելով համապատասխան գրանցման ծառայությունների կողմից հաստատված ինքնության եւ այլ հատկանիշների վրա»).

— բազմաթիվ լեզուներով տարբերակներ, ինչպես նախատեսված է տրաստային ցանկում՝ կիրառելիության դեպքում:

— Հետեւյալ դաշտերը եւ թվային հավաստագրերի համապատասխան արժեքները [1], եթե առկա են «Ծառայության թվային նույնականացման նշան» դաշտում, պետք է առնվազն ցուցադրվեն մարդու համար ընթեռնելի ձեւում.

— Տարբերակը

— Հավաստագրի սերիական համարը

— Ստորագրության ալգորիթմը

— Տրամադրողը՝ բոլոր համապատասխան՝ առանձնացված անվանումների դաշտերը

— Վավերականության ժամկետը

— Սուբյեկտը՝ բոլոր համապատասխան՝ առանձնացված անվանումների դաշտերը

— Բաց բանալին

— Հավաստագրման կենտրոնի բանալու նույնականացման նշանը

[1] Առաջարկություն ITU-T X.509 | ISO/IEC 9594-8. Տեղեկատվական տեխնոլոգիա. Բաց համակարգերի փոխկապակցվածություն. Տեղեկագիրը. Բաց բանալիների եւ հատկանիշների հավաստագրի շրջանակները (տե՛ս http://www.itu.int/ITU-T/recommendations/rec.aspx?rec=X.509)

— Սուբյեկտի բանալու նույնականացման նշանը

— Բանալու օգտագործումը

— Բանալու ընդլայնված օգտագործումը

— Հավաստագրման քաղաքականությունը՝ քաղաքականությանն առնչվող բոլոր նույնականացման նշանները եւ քաղաքականության բոլոր հատկորոշիչները

— Քաղաքականության քարտեզագրումները

— Սուբյեկտի այլընտրանքային անվանումը

— Սուբյեկտի տեղեկագրի հատկանիշները

— Հիմնական սահմանափակումները

— Քաղաքականության սահմանափակումները

— CRL-ի բաշխման կետերը [1]

— Հավաստագրման կենտրոնների մասին տեղեկությունների նկատմամբ հասանելիությունը

— Սուբյեկտի մասին տեղեկությունների նկատմամբ հասանելիությունը

— Ստուգված հավաստագրի վերաբերյալ տեղեկանքները (2)

— Հեշ ալգորիթմը

— Հավաստագրի հեշ արժեքը

— Մարդու համար ընթեռնելի ձեւը պետք է հեշտությամբ տպագրվի

— Մարդու համար ընթեռնելի ձեւը ստորագրվում կամ կնքվում է համակարգի օպերատորի կողմից՝ Հանձնաժողովի թիվ 2015/1505 կիրակող որոշման (ԵՄ) 1-ին եւ 3-րդ հոդվածներով սահմանված PDF ձեւաչափի ժամանակակից ստորագրության համաձայն:

[1] RFC 5280. համացանցի X.509 PKI հավաստագիր եւ CRL պրոֆիլ
[2] RFC 3739. համացանցի X.509 PKI. Ստուգված հավաստագրերի պրոֆիլ

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

Անդամ պետությունների կողմից սույն որոշման 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ծանուցվող տեղեկությունները պետք է պարունակեն հետեւյալ տվյալները եւ դրանց հետ կապված ցանկացած փոփոխություն.

1) SO 3166-1 ([1]) Ալֆա 2 ծածկագրերն օգտագործող անդամ պետությունները՝ հետեւյալ բացառություններով.

   ա) Միացյալ Թագավորության երկրի ծածկագիրը «UK» է,

   բ) Հունաստանի երկրի ծածկագիրը «EL» է.

2) տրաստային ցանկերի՝ ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւի եւ մարդու համար ընթեռնելի ձեւը կազմելու, վարելու եւ հրապարակելու համար պատասխանատու մարմինը/մարմինները.

   ա) համակարգի օպերատորի անվանումը. տրամադրվող տեղեկությունները, ըստ յուրաքանչյուր դեպքի, պետք է նույնական լինեն տրաստային ցանկում առկա «Համակարգի օպերատորի անվանումը» արժեքին այն բոլոր լեզուներով, որոնք օգտագործվում են տրաստային ցանկում.

   բ) կամընտրական տեղեկություններ՝ նախատեսված միայն Հանձնաժողովի ներքին օգտագործման համար այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կապ հաստատել համապատասխան մարմնի հետ (տեղեկությունները չեն հրապարակվում տրաստային ցանկերի ԵՀ-ի կողմից կազմված ցանկում).

1 ISO 3166-1՝ «Երկրների եւ դրանց վարչական միավորների անվանումները ներկայացնելու համար նախատեսված ծածկագրեր. Մաս 1. երկրների ծածկագրերը»:

— համակարգի օպերատորի հասցեն,

— պատասխանատու անձի (անձանց) կոնտակտային տվյալները (անունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն).

3) վայրը, որտեղ հրապարակվում է տրաստային ցանկի ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւը *(վայրը, որտեղ հրապարակվում է ընթացիկ տրաստային ցանկը)*.

4) վայրը՝ ըստ անհրաժեշտության, որտեղ հրապարակվում է մարդու համար ընթեռնելի տրաստային ցանկը *(վայրը, որտեղ հրապարակվում է ընթացիկ տրաստային ցանկը):* Մարդու համար ընթեռնելի տրաստային ցանկն այլեւս չհրապարակվելու դեպքում՝ այդ մասին նշում.

5) այն փակ բանալիներին համապատասխանող բաց բանալիների հավաստագրերը, որոնք կարող են օգտագործվել տրաստային ցանկի ավտոմատացված մշակման համար նախատեսված ձեւը եւ տրաստային ցանկերի մարդու համար ընթեռնելի ձեւն էլեկտրոնային եղանակով ստորագրելու կամ կնքելու համար. այդ հավաստագրերը տրամադրվում են որպես տրամադրվում են որպես Base64 կոդավորմամբ՝ Կատարելագործված պաշտպանությամբ էլեկտրոնային փոստի DER (ԿՀԿ՝ կոդավորման հատուկ կանոններ) ձևաչափի հավաստագրեր: Փոփոխություն կատարելու մասին ծանուցման համար՝ լրացուցիչ տեղեկություններ այն դեպքում, երբ Հանձնաժողովի ցանկում կոնկրետ հավաստագրին պետք է փոխարինի նոր հավաստագիր եւ այն դեպքում, երբ ծանուցված հավաստագիրը պետք է ավելացվի առկա հավաստագրին (հավաստագրերին)՝ առանց փոխարինման.

6) 1-ին կետից մինչեւ 5-րդ կետերի համաձայն ծանուցված տվյալների ներկայացման ամսաթիվը:

1-ին կետի, 2-րդ կետի «ա» ենթակետի, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերի համաձայն ծանուցված տվյալները պետք է ներառվեն տրաստային ցանկերի՝ ԵՀ-ի կողմից

կազմված ցանկում՝ փոխարինելով այդ կազմված ցանկում ներառված՝ նախկինում ծանուցված տեղեկություններին: